



جموعه اخبار
اداره خانی بك اوغده جاده كبرهه نومرو 70
MEDJMOUA-I-AHBAR
JOURNAL QUOTIDIEN
Bureau, 65 Grand'Rue de Péra



Մեքէլի բէշի 120 = 6 յԱՆՈՎ 60 = 60
իւր բաժնի 30 = 25 ԵՄ ԲԱՅՈՒՄ 50
ԵՄ ԲԱՅՈՒՄ 50
Տէր Խալիք Եւսէփ Իլի Եւսէփ Բազմ-
Լէ Եւսէփ Եւսէփ
Ղազար Եւսէփ Եւսէփ Եւսէփ Եւսէփ
8. ԲՈՒՆԻՍԻ ՍԵՆ

65 Բարեկամային Պէտքերու Ժամանակ Եւ 65

ԱՍԻՍԵՆ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ

Թաղական Հոգաբարձութիւն Ս. Յով-
հան Ոսկերեան Եկեղեցւոյ պատիւ ու-
նի ծանուցանել յարգոյ Հասարակու-
թեան թէ ի Ծրագրուցի Մենդեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յառա-
ջիկայ Ուրբաթ օր երեկոյեան ժամասա-
ցութիւնը պիտի սկսի ի ժամ 9¹/₂, 2այ-
նաւոր-պատարագը 11, և նախատօնակը
ի ժամ 12, ի ներկայութեան Ամեն. և
Գերեմի. Հոգեւոր Տեառն:

Նոյնպէս ի 23 դեկտեմբերի ի Տօնա-
խմբութեան Մենդեան Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, Ամեն. և Գերեմի.
Հոգեւոր Տէրն մեր հանդիսաւոր Պա-
տարագ պիտի մատուցանէ ի ժամ 5:

Հրաւիրեալ են ամենայն բարեպաշտ
և եկեղեցասէր հաւատացեալք ներկայ
գտնուիլ հոգեւոր և կրօնական պաշ-
տամանց և հանդիսութեանց:

Բերա, 1893 դեկտ. 21.

Թաղ. Հոգաբարձութիւն
Ս. Յ. Ոսկերեան Եկեղեցոյ

ԻԶՏԻՎԱՃ ՄԻՒՆԱՍԻՊԵԹԻՅԵԼԷ ՊԻՐ ՆՈՒԹԳ

Տիւնքի նիւստմիւղտ Պօղոս իշխնտէ
Քրիստոսեանութեան փուգութիւն եղանո-
ղմը Մըզրագեան Մ. Յակոբ իշխ. Պոյ-
նուպաղեան Օր. Պէտքերիսին իշխմի իշ-
տիւմընտա, կնքահայրաբը պուրու-
նան Ապտուլահեան Յովհաննէս Էֆէն-
տի թարափընտան իրատ օրուան նութ-
գուն սուրէթի տիր:

Տեաք իմ և Տիկնայք,

Մեծաւ գոհունակութեամբ հանդի-
սականացս հետ պաշտօնական վկայ ըլ-
լալու պատիւն ունեցայ այնպիսի պատ-
կապութեան մը որով մեր սիրելի և
առաքելի Մ. Յակոբին և Ռիտոր-
Պէտքերիսին միութիւնը սրբագործուե-
ցաւ և որուն արարողութիւնը եթէ
վերապատուեալ Հարց ներքին ինձ, կա-
տարուեցաւ պիտի ըսեմ, հայրապետա-
կան շնորհքով, յստակ և սրտագրաւ
արտասանութեամբ, շնորհալի աղօթիւք
նա և քաղցրանուաք եղանակներով Ար-
ղարեւ մեր ամեննուս վրայ նշարուած
ուրախութեան և ոգեւորութեան չափը
ան աստիճանի հասած է որ կարելի է
այս հանգէսը Քրիստոսեանութեան համար
նախանձելի գտնուէր եթէ հարսնեւո-
րաց ընտանիքներէն մին Օրթոքսիդէն
և միւսը իսկականէն անցելոյն մէջ կ.
Պօղոս Հայ Հասարակութեան երկու
ամենափայլուն կեդրոններէն առաջ ե-
կած ըլլային: Փափաքելով արդ մէկ
քանի խօսքով, թէ իմ զգացմունքս
յայտնել և թէ իւրաքանչիւրին խորհր-
դաժողութեանը քիչ շատ թարգման ըլլալ
պիտի ջանամ գլխաւորապէս մեկնելայն
պատճառները և պարագաները որոնք

ի սկզբանէ ի վեր այնքան համակրելի
ընծայեցին մեզի այս միութիւնը:

Յիրաւի, վերապատուեալ Հարց և
ազնիւ հանդիսականք իմ, ուշադրու-
թեան արժանի է նախ այն եռանդը ո-
րով երբեմն պզտիկ արգելքներով ուրիշ
աւելի մերձաւոր ազգականաց հարսնիք
ներէն իսկ ետ մնացած ըլլալով նախ-
դեմ, այսօր ամենքնիս ալ եղանակիս
սաստկութեան չկասեցանք և շնորհա-
կալութեամբ ընդունելով մեզի եղած
հրաւիրները խուռն բազմութեամբ դի-
մեցինք այնպիսի գիւղ մը որ թրամպէ
չոգեկաւք և չոգեհաւք զուրկ գրեթէ
ամայի և կղզիացեալ դիրք մը ունի և
որուն անունն իսկ ոմանց անխորտակե-
րեւնայ այնու որ Քրիստոսեանութեան
փով կը լսէինք արդի համաճարակ հի-
ւանդութեան սկիզբները: Չեմ կարծեր
որ մեր ազնիւ հիւրընկալները վշտա-
նան իրենց գիւղին նկատմամբ այս ըսած-
ներէս, որովհետեւ արդէն անոնք իսկ
պատմած են մեզի այստեղ իրենց իրած
դժուարութիւնները երթեկեկութեանց
մասին: Այս աստուածային նախախ-
նամութիւնը այնպէս կարգադրեալ է որ
Տէրքոզի ընկերութիւնը հոս չի կրնար
ըլլալ իր վերին Պօսփօրի աւագանը:
Աստ, ներեցեք ինձ, վերապ. Տեաք և
ազնիւ Հանդիսականք, որ վայրկեան մը
չեղիմ իմ նիւթէս և իրօք նախախնա-
մութեան շնորհներէն և մեր Օգոստոս-
փառ Վեհապետին կանխատեսութեան
ապացոյցներէն մին համարիմ, ոչ միայն
աւագանիս շնորհութիւնը այլ նոյն իսկ
Տէրքոզի ընկերութեան գոյութիւնը ի
մայրաքաղաքս կ. Պօսփօր, Քիչ մը առաջ
յիշուած ահաւոր հիւանդութեան սկիզ-
բները, ոմանք իբր առողջապահական
նախանձախնդրութեամբ, դոյզն ինչ
խճճանք խօսեցան այն ընկերութեան
ջրայ տեսակին վրայ: Այլ մեք կըսեմք,
չէ թէ լոկ Մ. Յակոբին հաճութիւն
պատճառելու համար հապա նոյն իսկ
անկեղծ համոզմամբ որ յիշուի վայելու
վիճակի մէջ կըլլայինք եթէ Տէրքոզի
ջրայն ալ չըլլար: հիւանդութեան ժա-
մանակս շատերնիս կը յիշեմք այն գար-
չելի ջրերը որ Տէրքոզի ընկերութիւն-
նը հաստատուելէն առաջ երաշտու-
թիւն տիրող ժամանակներ կըստիպուե-
ինք գործածել ոչ միայն մաքրութեան
այլ և խմելու պիտոյից:

Ահա օգտակարութեան համար շնոր-
հակալութիւններուս արժանի այսպիսի
ընկերութիւն մըն է որ մեր Մ. Յա-
կոբին ընտանեաց տէր ըլլալն ալ ստու-
գելէն վերջը, իրեն պատօն մը կուտայ
միանգամայն պայման դնելով որ աւա-
զանիս վրայ չիւնուած և մեզի այժմ
հանդիսավայր եղած տունը իրեն բնա-
կարան ընէ ընտանիքն ալ միատեղ ըլ-
լալով որպէս զի իր բացակայութեան
ժամանակներն իսկ ընկերութիւնը միշտ
հոս ներկայացուցիչ մը ունենայ:

Անկէց ի վեր, հաճելի է մեզ յիշել,
Մ. Յակոբ անխոնջ ջանիւք և եռանք

դով կը պարապի իր գործոցը: Կը պար-
պէ կը լեցնէ երբեմն այս աւագանը,
շատ անգամ անոր ներքին ծակերէն
եկած սուրիչ ձայներուն ուշադրու-
թեամբ ականջ դնելով, կարծէք թէ
ընկերութեան շնչառութիւնը կը քննէ,
անոր խորովակները իր երանկերուն պէս
կը հոգայ, անոր ջրոյ հոսանքներուն նը-
կատմամբ պզտիկ անկարգութիւն մը
նշարած՝ անսովոր խորհրդում մը լսած
ժամանակ կարծէք թէ իր արեան շրջա-
նը կը խանգարի իր սիրտը կը բաբախէ,
միով բանիւ ընկերութեան ամեն տե-
սակ շահուց կատարեալ համարախու-
թեամբ, անոր յաջողութեանց վրայ կը
հիմնէ իր երջանկութեան յոյսը, և բո-
լոր Մըզրագեան ընտանիքներուն իրա-
ւամբ կէս հայրը սեպտեմբր իր վերապա-
տուելի հօրեղբորմէն Վ. Տէր Յովհաննէս
Մըզրագեան վարդապետէն ալ ինչ ինչ
քաջակրթութիւններ ընդունելով կը խոր-
հի որ ընտանեացը մէջ իրեն յատուկ
դոյն մը ունենալու ժամանակը հասած
է: Այս նպատակաւ կը ջանայ գտնել
այնպիսի առաքելի ընկերուհի մը որ իր
պաշտօնին տեսակը, տանը դիրքը և
ժամանակիս պահանջու մեքը նկատողու-
թեան առնելով կամենայ փոփոխակի
օգնութեան գործնական դրութեամբ
իրեն հետ կենակցի: Ինչեւ թէ հաս-
րակութեան միջին դասու ընտանեաց
մէջ ընդհանրաբար այս դրութիւնը զի
այնու իսկ ամուսնութիւնը կը դիւրանա-
յին և բարեբաւոյն ընտանիքներ կը
բազմանային:

Իսկով այժմ այն պարագաներուն ո-
րոնք ուղղակի կերպով նպաստեցին մեր
նորապսակ ամուսնացելոյն այս միութեան,
մի կարծէք Տեաք իմ և Տիկնայք որ
իրենց համար պիտի ըսեմ թէ տեղւոյս
ձկնորսներէն օրինակ առած մէկը զմիւ-
սը որսալով ձեռք ձգեց, քաւ լիցի: որ-
սալ բառը՝ որ գաղտնի և հարպիկ հը-
նարքներու կիրառութիւններ և երբեմն
պարագորդք բախտախնդրութիւններ
կենթադրէ՝ չյարմարիր մեր Մ. և Օ.
րիտորք Մըզրագեաններուն առաքելի և
աստուածալիս ընթացից որ միշտ ի-
րենց գովելի գործերով և պարտուց
կատարմամբ զբաղեալ ամէն մէկ քայ-
լերին, ինչ որ ըսած եմ, իրենց մօր և
ընտանեաց մեծերուն գիտութեամբ և
հաճութեամբ կատարած են: Որսալ
բառը՝ որ ինչ ինչ նախապատրաստու-
թիւններ կենթադրէ չյարմարիր նա-
խախնամութեան ներշնչած այն որոշ-
ման որով բաւական եղաւ անգամ մը
Այնպէսնայն ազնիւ Գերդաստանին հայնչ-
ոյն մէջ անգամ մը միայն զիրար դիտել
և մէկէն յանգիլ այն սիրալիր խոստման
որուն հրաշալի լրումը այսօրուան պա-
հուած է եղեր: Վերջապէս որսալ բառը՝
որ մէկ կողմին համար միւսին նկատ-
մամբ առաւելութիւն մը կրնայ են-
թադրել, չեմ կրնար վայելեցնել մեր
նորապսակ ամուսնացելոյն որոնց եր-
կունքն ալ թէպէտ զանազան տեսակ
ձիրքերով օժտեալ ալ իրենցմէ իւրա-

քանչիւրին սեփական ձրից և յատու-
թեանց ամբողջութեանց իրարու ան
աստիճան հաւասար և յարմար կը գտ-
նուին որ գոնէ իմ աչացս առջեւ ամեն
քաղցատուութենէ խոյս կուտան:

Թողունք արդ այս բաղդատութիւն-
ները երկու անձանց մէջ զորս Աստուած
զուգեաց ըսին մեր վերապատուելի վար-
դապետները և եթէ ուզենանք միով
բանիւ իրենց երկուքին ալ միատեղ մեր
սիրոյ և համակրանց չափը կատարե-
լապէս յայտնել, կարծեմ բաւական է
ըսել որ այսօր երկունքն ալ հաւասար-
րապէս Մըզրագեաններու կը յորդորին
և յիշել միանգամայն այն հիւանալի զու-
գադիպութիւնը որ Յունական դիցա-
բանութեան «symboles»-ներու մէջ գոր-
ծածուած նետերու նկարները այն խոր-
հըրդաւոր Մըզրագեաններ՝ սէր կը նշանա-
կէին:

Ուստի վերապատուելի Հարց և աղ-
նիւ Հանդիսականք, թող Քրիստոսեան-
ութեան ոմանց անխորտակ երեւնայ, թող
այս անունը իրենց անարկու զորութեան,
հաւանդութեան տաքնապնէր և միջեւ
անգամ մահուան երկիւղներ յիշեցնէ:
մեզի համար ասկէ վերջը մանաւանդ
այս գիւղս այնչափ սիրելի է որ անոր
անունն իսկ մեր համակրութեան հիւ-
պոյս մը պիտի ըլլայ: զի քորտօնի տեղ
աշխարհքիս վրայ ամենէն քաղցր և
սուրբ կապերէն մէկը, հիւանդութեան,
տաքնապնէրու տեղ անդորրութեան և
երջանկութեան հայելիներ և մահուան
երկիւղի տեղ, ալ ինչ ըսեմ, ծննդեան և
նոր կենաց յոյսեր և հասարակութեան
համար կենսական դրութիւն մը թեւադ-
րել պիտի տայ մեզի:

Ձեզի կը թողում արդ վերապատուելի
Տեաք իմ որ նախ բազում պատճառնե-
րով և մանաւանդ այսպիսի ուրախալի
օրերուս մէջ ամենէն առաջ մեր միտքը
գրաւող մեր Օգոստոսփառ Վեհապետին
Ղազի Սուլթան Ապտուլ Համիտ Խան
Բ. Կայսեր թանկագին կենացը համար
և յետոյ մեր նորապսակ Մ. և Օրիտորք
Մըզրագեաններուն և անոնց ազնիւ մօր
և ընտանեաց և ազգականաց և ամե-
նայն Հանդիսականաց կենացը համար
Ձեր օրհնեալ բերնէն բղխած մանաւոր
աղօթիւք մեր ջրում և քաղմատեսակ
մաղթանաց ամենէն սուրբ անձաքանքը
հնչեցնէք:

ԻԷՃԱ

Ձաթէն սէնէնին խիթամը եաղըն օ-
լուպ, չու արալըք ինթիսաճաթըմըզըն
զիեատէ օլմար տա թապի իտուկին-
տէն, կէրէք Տէրիպատէթտէ վէ կէրէք
թաշրատա պուլուան միւհթէրէմապօ-
նէլէրիմիզտէն ապօնըման միւտտէթէրի
հըլուլ իթմիլ օլանլարըն պիր ան էվէլ
թէէտիեթի տէյնէ հիմմէթէրին խասսէ-
թէն րէճա իտէրիլ:

—Անասը Ծալթալը Բօլ Կալիպ
սիա իսմինտէ պիր թապիպ՝ Թօբհա

Վլաաւոր միջերանցքը Լոնտոն է (114 and 116, Southampton Row)
 Կոչուպէս Բարիզ ու Կոլու Եօքք: Կրփաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւշա-
 գործներու և անգղիացի դեղագործներու ջոք: